

Ուղեցուցիչ «ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հոդվածը կարող է ներկայացվել հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով:

Հոդվածը պետք է կառուցված լինի հետևյալ ձևաչափով՝

հոդվածի վերնագիր, համառոտագիր, հիմնաբառեր, հեղինակի անուն, ազգանուն, հայրանուն, գիտական աստիճան, կոչում, աշխատավայր, պաշտոն, որոնք անհրաժեշտ է ներկայացնել հայերեն, ռուսերեն և անգլերեն:

Նշվում է նաև հեղինակի էլեկտրոնային հասցեն, հեռախոսահամարը և ORCID ID-ն:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքում ներկայացվում են գիտական այն արդյունքները, որոնք առավել առաջնահերթ են տվյալ ոլորտում և երբևէ հրատարակված չեն եղել:

Աշխատանքում ընդգրկվում են հետևյալ բաժինները.

- համառոտագիր (ABSTRACT),
- հիմնաբառեր (KEYWORD),
- ներածություն (INTRODUCTION),
- գրականության ակնարկ (LITERATURE REVIEW),
- հետազոտության մեթոդաբանություն (RESEARCH METHODOLOGY),
- վերլուծություն (FINDINGS, RESULTS, DISCUSSION),
- եզրակացություններ (CONCLUSIONS),
- գրականություն (REFERENCES):

Նշված բաժինները վերնագրերով առանձնացնելը պարտադիր է: Անհրաժեշտության դեպքում հոդվածի բովանդակությունը կարող է բաժանվել առանձին բաժինների՝ իրենց ենթավերնագրերով:

1. Համառոտագիր: Համառոտագրում եռալեզու՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն, ներկայացվում են հետազոտության հիմնական բովանդակությունն ու ստացված արդյունքները (150-250 բառ):

2. Հիմնաբառեր (ոչ ավելի, քան 7 բառ):

3. Ներածություն: Ակնարկ է կատարվում թեմայի արդիականությանը, նպատակին և վերջին տարիների զարգացումներին (150-250 բառ):

4. Գրականության ակնարկ: Կատարվում է հետազոտության թեմայի վերաբերյալ գիտական գրականության վերլուծություն: Ներկայացվում են այն հիմնական ուղղությունները, որոնք զարգացրել են այլ հետազոտողներ՝ թեմայի ուսումնասիրության շրջանակներում (300-1200 բառ):

5. Հետազոտության մեթոդաբանություն: Ներկայացվում է հետազոտության մեթոդաբանությունն ու գործիքակազմը՝ հիմնավորելով վերջիններիս ընտրության անհրաժեշտությունը (200-700 բառ):

6. Վերլուծություն: Բացահայտվում են հետազոտության օբյեկտի օրինաչափությունները, միտումները, զարգացման ուղղությունները, խոչընդոտները և այլն, որոնք ձևավորում են հետազոտության հիմնական արդյունքները (1000-2500 բառ):

7. Եզրակացություններ: Հետազոտության հիմնական արդյունքների համառոտ նկարագրություն (200-500 բառ):

8. Գրականության ցանկ: Ներկայացվում է հաջորդաբար՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն՝ յուրաքանչյուր պահպանելով այբբենական կարգը:

Գրականության ցանկից առաջ, հեղինակի ցանկությամբ կարող է լինել նաև երախտիքի խոսք:

Հոդվածը կարող է ներկայացվել 2100-6100 բառի շրջանակներում:

ՀՈԴՎԱԾԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Տառատեսակը՝ GHEA Grapalat, տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5, էջի չափը՝ A4, լուսանցքները՝ ձախից՝ 3 սմ, աջից՝ 1.5 սմ, վերևից՝ 2 սմ, ներքևից՝ 2 սմ, հղումները՝ տողատակում, ըստ հետևյալ հաջորդականության՝ աղբյուրի հեղինակ, վերնագիր, հրատարակության վայր, տարեթիվ (պարբերականի դեպքում՝ նաև համար) և էջ:

Հոդվածում ներկայացված գծապատկերները և աղյուսակները պետք է ունենան խմբագրական միջամտության հնարավորություն: